ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 մայիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

73
(2739)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՍՈՒԼԻՍՆ ԱՆԱԿՆԿԱԼԻ Է ԲԵՐԵԼ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻՆ

Նիկոլ Փաշինյանի ասուլիսում հնչեցրած մտքերը անակնկալի են բերել նաեւ շատ ՔՊ-ականների, թեեւ տարբեր հանդիպումների ժամանակ Փաշինյանը թափանցիկ ակնարկներով ասել է, թե ինչ ողբերգություններ են մեզ սպասվում: Փաշինյանը, մասնավորապես, հայտարարել էր, որ եթե Հայաստանը ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ 86.600 ք/կմ-ի սահմաններում, ապա դա ներառում է նաեւ Արցախը եւ անկլավները: Բանն այն է, որ մինչ այս Փաշինյանը ՔՊ-ականների հետ հանդիպման ժամանակ պարբերաբար խոսել է Արցախի վերաբերյալ բանակցությունների մասին, ասել է, որ վիճակը ծանր է, Հայաստանը մանեւրելու տարբերակներ է փնտրում, բայց հստակ չի ասել այն, ինչ ասել է իր ասուլիսի ժամանակ: Ստացվում է՝ ՔՊ-ականներն էլ Փաշինյանի ասուլիսի ժամանակ են առաջին անգամ լսել այդ ճակատագրական հայտարարությունները: Փաշինյանի ասուլիսից հետո ՔՊ-ականները խառն են, ներսում տարբեր խոսակցություններ են գնում, անգամ առանձին զրույցների ժամանակ դժգոհություններ են հայտնում իրավիճակի անելանելիության մասով: Ասուլիսից հետո էլ ՔՊ-ականները տեղները չեն գտնում, մտածում են՝ինչպես Փաշինյանի հայտարարությունների տակից դուրս գան, ինչպես մեկնաբանեն դրանք: Ստացվում է՝ հայտարարություններ անում է Փաշինյանը, բայց կրակն են ընկնում ՔՊ-ականները ու պիտի պատասխանատվություն կրեն չիմացածի համար:

Հայաստանում գոյություն ունի ՀՀ նախագահի ինստիտուտ. նախագահի պաշտոնը զբաղեցնում է նախկին ընդդիմադիր գործիչ Վահագն Խաչատուրյանը, սակայն հանրության մոտ հարցեր են առաջանում. երկրում ստեղծված այս ճակատագրական իրավիճակում ո՞ւր է նա, ինչո՞վ է զբաղված, ինչո՞ւ որեւէ կերպ չի անդրադառնում երկրում տեղի ունեցող աղետալի իրադարձություններին կամ Փաշինյանի սենսացիոն հայտարարություններին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Խաչատուրյանն անգամ նախագահականում որեւէ կոնկրետ գործունեություն չի իրականացնում, հիմնականում դակում է Նիկոլ Փաշինյանի ուղարկած փաստաթղթերը, օրենքները, նշանակումները, տարբեր մշակութային միջոցառումների է մասնակցում, խելացի դեմքով շրջում թանգարաններում եւ վերջ. այսքանով նրա գործունեությունն ավարտվում է՝ չհաշված երբեմն գործուղումների մեկնելը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ անգամ իշխանական գործիչների մեծ մասն է դեմ Վահագն Խաչատուրյանի այս անտարբեր աշխատաոճին: Շատ իշխանականներ այն կարծիքին են, որ պետք չէ ունենալ ՀՀ նախագահ, որն առանձնապես կարեւոր գործով զբաղված չէ, բայց նրա վրա 2-3 մլրդ դրամ տարեկան գումար է ծախսվում՝ աշխատավարձ, վարորդ, աշխատակիցներ, ճամփորդություններ... Հանրության մոտ հարց է առաջացել՝ ինչու է Վահագն Խաչատուրյանը, օրինակ, երեկ մեկնել Քաթար՝ գործուղման, կամ, չգիտես՝ ինչու, ուրբաթ օրը Միեր Գրիգորյանի եւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի ուղեկցությամբ այցելել էր «Ուիգմոր» հիվանդանոց, որը ասոցացվում է Ավանեսյանի մոր հետ: Ստացվում է՝Վահագն Խաչատուրյանը դրսում եւ ներսում տուրիստի դեր է կատարում, ու կարող ենք արձանագրել, որ նա ՀՀ ամենաբարձրաստիճան տուրիստն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեն 2021թ. դեկտեմբերի 7-ին ԱԺ-ում տեղի ունեցած հայտնի միջադեպի առիթով հարուցված քրեական գործով որոշել է ՔՊ խմբակցության պատգամավոր, Նիկոլ Փաշինյանի աներորդի Հրաչյա Հակոբյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել: Ի դեպ, նաեւ ՀՀ քննչական կոմիտեն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Թադեւոս Ավետիսյանի օգնական Գերասիմ Վարդանյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու որոշում էր կայացրել: Ինչպես հայտնի է, այդ օրը խորհրդարանում վիճաբանություն էր տեղի ունեցել ՔՊ խմբակցության մի քանի պատգամավորների եւ «Հայաստան» խմբակցության պատգամավորների օգնականների միջեւ: ԱԱԾ-ն գնացել էր Ազգային ժողով՝ հարցաքննելու ՔՊ խմբակցության պատգամավոր, Նիկոլ Փաշինյանի աներորդի Հրաչյա Հակոբյանին, Վահագն Ալեքսանյանին, Սիսակ Գաբրիելյանին եւ Արմեն Խաչատրյանին: Հավելենք, որ այդ քրեական գործով ԱԱԾ-ն նաեւ հարցաքննել է Ազգային ժողովի աշխատակազմի՝ տասնյակից ավելի աշխատակիցների, որի արդյունքում որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնել: Ստացվում է, որ նախաքննական մարմինը խուլիգանության հատկանիշներով հարուցել էր քրեական վարույթ, սակայն, նախաքննական մարմնի որոշմամբ, մասնակիցներից որեւէ մեկը խուլիգան չէ, չնայած որ հայհոյել են հանրային վայրում, անպարկեշտ պահել իրենց: Ամեն դեպքում, հարցը փակվեց:

«Ֆակտորի փրոդաքշն»-ը շարունակում է պետական տարբեր գերատեսչությունների սիրելի ընկերությունը լինել՝ մեկ անձից գնումներ կատարելու առումով: Այս անգամ Արտաքին գործերի նախարարությունն է մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր ստորագրել ընկերության հետ՝ 736 հազար դրամի չափով: Այս գումարով ՀՀ ԱԳՆ-ն ձեռք է բերել 120 հատ թղթապանակ, 120 նոթատետր, 120 գրիչ: Իհարկե, սա փոքր գումար է՝ այն գումարների համեմատ, որոնք այս ընկերությունը ստացել է նախկինում: Օրինակ՝ «Ֆակտորի փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 750 մլն 192 հազար դրամ էր հատկացվել 2022 թ. մայիսի 21-31-ը Երեւանում անցկացված բռնցքամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության կազմակերպման եւ անցկացման նպատակով: Սա միակ գնումը չէ. «Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ-ին 2019-20 թթ.-ին 325 մլն դրամ էր վճարվել Երեւանում ամանորյա միջոցառումները կազմակերպելու համար: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համաձայն՝ «Ֆակտորի փրոդաքշն» ընկերությունը ստեղծվել է 2017-ին: Հիշեցնենք, որ այս ընկերության հիմնադիրները Վազգեն Պողոսյանը եւ Ռուդիկ Տեր-Գալստյանն են: Նրանք աշխատել են «Շարմ հոլդինգ» ՍՊԸ-ում, Հանրային հեռուստաընկերությունում, երբ դրա ղեկավարը Ռուբեն Զաղինյանն էր: Այժմ մերձ հարաբերություններ ունեն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի գործունյա եղբոր եւ Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի տեղակալ - գլխավոր պրոդյուսեր Տիգրան Վիրաբյանի հետ:

ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆՔ

ՏԵ՛Ր ԿԱՆԳՆԻՐ ԱՐՑԱԽԻՆ

Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսում հաստատեց, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականություն ճանաչելը 86.600 քմ/կմ սահմաններով ներառում է նաեւ Արցախը, բացի սա, Հայաստանը պատրաստվում է Ադրբեջանին զիջել նաեւ անկլավները: «Ժողովուրդ» օրաթերթն այս առիթով զրուցել է «Հայաստան» խմբակցության ղեկավար Մեյրան Օհանյանի հետ:

-Պարոն Օհանյան, ի՞նչ կասեք Նիկոլ Փաշինյանի հայտարարությունների վերաբերյալ, անակնկա՞լ էին դրանք Ձեզ համար:

-Նիկոլ Փաշինյանի այդ բազմաժամանոց ասուլիսը, որի ընթացքում ինքն անընդհատ կրկնում էր նույն բաները, ինչ նախկինում է ասել, որում նորություն չկար ո՛չ ժողովրդի համար, ո՛չ էլ ընդդիմություն համար, հերթական անգամ ցույց տվեց, որ ինքը հակապետական, հակասահմանադրական, հակաօրինական գործունեություն է ծավալել իր իշխանական թիմի հետ միասին, ինչի հետեւանքով վտանգված է եւ՛ Հայաստանի, եւ՛ Արցախի ապագան: Ես կուզեի հարց ուղղել Նիկոլ Փաշինյանին՝ դու իշխանություն գալուց հետո հայտարարում էիր, որ Արցախը Հայաստան է եւ վերջ, հանրահավաք էիր կազմակերպում Արցախում, Շուշիում պարում էիր եւ դրանով ուզում էիր ցույց տալ, որ դու ես տերը ամբողջ հայ ժողովրդի թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում առանց հասկանալու, որ դա մեծ վնաս է հարցնում հայ-ադրբեջանական հարաբերություններին եւ բանակցային ողջ գործընթացին: Այդ ժամանակ դու ուզում էիր տղայական ձեւով ասել, որ դու ես տերը: Ինչո՞ւ եմ ասում տղայական. որովհետեւ այդպիսի արտահայտություններ որեւէ պետական գործիչ, որը տիրապետում է պետական կառավարման նրբություններին, երբեւիցե չի կարող անել: Այսօր ասում ես, թե Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ներառում է Արցախը եւ անկլավները: Արցախի ճակատագիրը պետք է որոշվի Ստեփանակերտ-Բաքու հարթության մեջ: Դե հիմա, եթե տղայական արտահայտություն ես արել, տղա ես՝ գնա՛ ու տե՛ր կանգնիր Արցախին. ինչո՞ւ չես գնում: Այս ամենից մենք գալիս ենք այն եզրակացության, որ խախտվել են այն բոլոր կարմիր գծերը, որոնք մեզ համար կարեւոր են: Արցախի ինքնորոշումը իրականացվել է Խորհրդային Միության փլուզման ընթացքում, Արցախը ինքնորոշվել է՝ Խորհրդային Միության օրենքների համաձայն այնպես, ինչպես Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը եւ մնացած խորհրդային պետությունները: Արցախը երբեւիցե անկախ Ադրբեջանի կազմում չի եղել, որովհետեւ Ադրբեջանը հրաժարվել է Խորհրդային Միության այդ տարածքների իրավահաջորդ լինելուց:

-Պարոն Օհանյան, իշխանությունն իր օրակարգը հստակ ասում է, պարզ ցույց է տալիս, թե ինչ ճանապարհով է շարժվում, ընդդիմությունն ի՞նչ է պատրաստվում անել. հասարակությունը հստակ քայլեր է ակնկալում այս օրերին:

-Նախ՝ մենք հստակ աջակցում ենք Արցախի ԱԺ հայտարարությանը, որը համայն հայությանը համախմբվելու կոչ էր անում: Մենք նաեւ քաղաքական եւ հասարակական տարբեր ուժերի հետ շարունակում ենք համագործակցությունը: Վերջերս Կոռնիձորում մեծ հանրահավաք եղավ, որին նաեւ մենք էինք մասնակցում: Այդ հանրահավաքով ցույց տվեցինք, որ մենք Արցախի կողքին ենք, պատրաստ ենք մեր սահմանները պաշտպանել եւ շարունակելու ենք մեր պայքարը: Ընդդիմությունն իր գործունեությունը շարունակելու է խորհրդարանում՝ ուշադրությունը հրավիրելով անվտանգային խնդիրների եւ Արցախի վրա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀՈՒՇԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը փոխըմբռնման հուշագիր է ստորագրել Արաբական էմիրություններում ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության անունից: Այս մասին հայտնել է ինքը՝ Քերոբյանը, այցի հաշվետվությունը ներկայացնելիս: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Արաբական Միացյալ Էմիրություններում Աբու Դաբիում, մայիսի 7-10-ը գործուղման մեկնելու ժամանակ է Քերոբյանը ստորագրել հուշագիրը այլ նախարարության անունից: Հավելենք, որ ապրիլի 30-ից մայիսի 3-ն ընկած ժամանակահատվածում էլ է Քերոբյանը կրկին ԱՄԷ-ում եղել, սակայն Դուբայ քաղաքում: Այս այցելության համար էլ ավիատոմսի արժեքը կազմել է 218 հազար դրամ, գիշերավարձը՝96 հազար դրամ (2 օրվա համար), օրապահիկը՝ 147 հազար 573 դրամ (3 օրվա համար): Ընդհանուր առմամբ, նշվում է, որ ծախսը կազմել է 462 հազար դրամ: Իսկ որքանո՞վ են արդյունավետ եղել պետբյուջեի հաշվին կատարված այցերը: Մայիսի 3-ին՝ Հայաստան վերադառնալուց հետո, նախարար Քերոբյանը մայիսի 7-10-ը էլի մեկնել է Աբու Դաբի՝ Արդյունաբերության եւ բարձր տեխնոլոգիաների նախարարության հրավերով: Այնտեղ նա մասնակցել է «Ամենամյա ներդրումային համաժողով-2023»-ին: Իր հաշվետվության մեջ նախարարը երկար բացատրել է, թե ովքեր են ելույթ ունեցել, կամ ինչ հարցեր են քննարկվել: Ամենաուշագրավը թերեւս արդյունքների մասին հաշվետվությունն է, որտեղ նշվում է, որ ԱՄԷ հանդուրժողականության եւ համակեցության նախարարության եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միջեւ կնքվել է հանդուրժողականության ոլորտում փորձի փոխանակման մասին փոխըմբռնման հուշագիր: Այստեղ հարց է առաջանում. ի՞նչ կապ ունի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն սոցապնախարարության հուշագրի հետ: Եթե նա համատեղության կարգով նաեւ սոցապնախարար չէ, ինչո՞ւ է ստորագրում փաստաթուղթ Սոցապնախարարության անունից: Սա էլ երեւի Նիկոլ Փաշինյանի հեղափոխական ժողովրդավարության յուրօրինակ դրսեւորում է, որտեղ չկա հայտնի պոզով, պոչով կոռումպացված կենդանին:

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հակակոռուպցիոն դատարանը ծանուցում է ուղարկել ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի տեղակալ Մակար Ղամբարյանին, որպեսզի ներկայանա դատարան՝ որպես վկա հարցաքննվելու: Երեկ Մակար Ղամբարյանը անձամբ ներկայացել էր Հակակոռուպցիոն դատարան եւ որպես վկա հարցաքննվել: Նշենք, որ ՀՀ պաշտպանության փոխնախարարի պաշտոնից Մակար Ղամբարյանն աշխատանքից ազատման դիմում էր ներկայացրել 2020թ.-ի նոյեմբերի 24-ին: Նրա անունը նաեւ «Օրսիսի գործ»-ի հետ էր կապվում: Հիշեցնենք,որ ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին: Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը եւ Դավիթ Գալստյանը, իսկ մյուս անձինք ազատության մեջ են: Եվ, ահա, այս գործի շրջանակներում էլ Մակար Ղաբարյանը ներկայացել էր Հակակոռուպցիոն դատարան:

ԱՐՑԱԽ

ԹԵ ՈՎ ԻՆՉՊԵՍ ԱՐՁԱԳԱՆՔԵՑ

Մայիսի 22-ին Արցախի խորհրդարանն արձագանքել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին:

Երեկ՝ ուշ երեկոյան՝ Արցախի խորհրդարանում գումարված արտահերթ նիստի ընթացքում միաձայն ընդունված հայտարարությամբ արցախցի պատգամավորները պնդում են՝ Հայաստանի ղեկավարը կոպտորեն խախտում է ՀՀ անկախության հռչակագրի ու Սահմանադրության ամրագրումներն Արցախի մասին: Ուշ գիշերին հրավիրված նիստի ընթացքում ելույթ ունեցան Արցախի խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչները, որոնք կոշտ քննադատում, դատապարտում էին Արցախի հարցով վարչապետ Փաշինյանի հայտարարությունները: Փաշինյանի հայտարարությունների մասին իրենց ուղերձը հղեցին նաեւ Արցախի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը:

«Հայաստանի Հանրապետության գործող իշխանությունների պահվածքն ու դիրքորոշումը՝ Արցախի ժողովրդի համար ճակատագրական հարցերում Ադրբեջանի ցանկություններին անվերապահ ենթարկվելու տրամաբանությամբ, անընդունելի են: Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ են եղել Արցախի պետականությունը կասկածի տակ դնելու ՀՀ իշխանությունների անհասկանալի քայլերը: Մեզ հասանելի խողովակներով փորձել ենք զգուշացնել նման վարքագծի կործանարար հետեւանքների մասին: Ոչ ոք բարոյական իրավունք չունի որոշելու մեր ու մեր զավակների ապագան: Արցախը չի ընդունել եւ չի ընդունելու այն մոտեցումները, որոնք այսօր ներկայացվել են ՀՀ վարչապետի կողմից, եւ ինչպես նախկինում է պայքարել, այնպես էլ հիմա բոլոր հնարավոր միջոցներով պայքարելու է իր հայրենիքում արժանապատիվ ապրելու իրավունքի համար», - նշված է հայտարարության մեջ:

Հայտարարություն է տարածել նաեւ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը. «Եղել եւ հաստատապես շարունակում եմ լինել Արցախի իմ քույրերի ու եղբայրների կողքին՝ հավատարիմ իմ մարտական ընկերների շիրիմների առջեւ տված երդմանս՝ կիսատ չթողնել համատեղ սկսած գործը: Խոսքերից զատ, այսօր առավել, քան երբեւէ, կարեւոր են քայլերը, գործերը եւ համախմբվածությունը՝ անկախ ամենատարբեր տարաձայնություններից ու ամբիցիաներից, որոնք ոչինչ են մեր ժողովրդի գլխին կախված արհավիրքի կողքին»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

Քրեակատարողական ծառայողներն ատեստավորում կանցնեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կառավարությունն առաջարկում է փոփոխություններ կատարել «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքում, որով քրեակատարողական ծառայողների համար ատեստավորման նոր կարգ կսահմանվի: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագրի 16-րդ կետով, ի թիվս այլ քայլերի, նախատեսված է «Քրեակատարողական ծառայության կադրային քաղաքականության վերանայում» միջոցառումը:

Ատեստավորման կարգ ներդնելով՝ նպատակ է առկա մասնագիտական համապատասխան ներուժ ունեցող կադրեր ներգրավել, ինչպես նաեւ նրանց սոցիալական ապահովության անհրաժեշտ մակարդակ սահմանել: Այսպիսով, այս նախագծի ընդունմամբ կներդրվի քրեակատարողական ծառայողների համար նոր ատեստավորման կարգ, որի արդյունքներով պայմանավորված՝ քրեակատարողական ծառայողին կհաշվարկվի հավելավճար: Այսինքն՝ նախագծի ընդունումը նպատակ է հետապնդում նաեւ բարելավել Քրեակատարողական ծառայության ներկայիս ծառայողների վարձատրության պայմանները:

Գործընթացի շրջանակներում նախատեսվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանել ատեստավորման կարգ, որի համաձայն՝ կներդրվի քրեակատարողական ծառայողների ատեստավորման համակարգը, կսահմանվեն համապատասխան հավելավճարների չափերը, վճարման եւ հաշվարկման կարգերը, հաշվարկվող հավելավճարների դադարման պայմանները: Օրենքով նախատեսվող կարգավորումները ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ քրեակատարողական ծառայության համապատասխան պաշտոններ զբաղեցնող անձիք պարտավոր են լինելու անցնել ատեստավորում երեք տարվա ընթացքում:

Միաժամանակ, հավելավճարի հաշվարկման եւ վճարման հնարավորությունը առկա է լինելու բացառապես քրեակատարողական ծառայողի կողմից ատեստավորման դրական արդյունքների արձանանգրման դեպքում: Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերած քրեակատարողական ծառայողը կարող է կրկնակի ատեստավորում անցնելու համար դիմել տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ, որի արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռք բերման օրվանից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ»-Ը ՊԱՅՔԱՐ Է ՄԿՍՈՒՄ

Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս ճանաչելու՝ Նիկոլ Փաշինյանի հայտարարությունից հետո ՀՅ Դաշնակցության Գերագույն մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելյանը երեկ հայտարարեց պայքար սկսելու մասին:

««Դաշնակցություն»-ը,- հայտարարեց Իշխան Սաղաթելյանը,- ամեն ինչ անելու է լայն համախմբման համար»: Նաեւ փողոցային պայքարից խոսեց: Գործողությունների կոնկրետ ժամկետներ հրաժարվեց նշել:

«Իրենք լեգիտիմ չեն, իրենք չեն արտահայտում հայ ժողովրդի կամքը, հետեւաբար ցանկացած գործողություն այս իշխանություններից ազատվելու եւ երկիրը փրկելու՝ կլինի անհնազանդություն, ապստամբություն, այս իշխանությունն այլ ընտրության, այլ հնարավորություն չի թողնում՝ կա՛մ պետք է հանձնվել, կա՛մ պետք է պայքարել հայրենիքի համար: Ես բռնի գործողությունների կոչ չեմ անում, ապստամբությունը անհնազդանություն է եւ ժողովրդի սրբազան իրավունքն այն իշխանության դեմ, որի ձեռքը ժողովուրդը գերի է ընկել», - ասաց նա:

Խորհրդարանում իշխանականները երեկ մեծամասամբ հրաժարվում էին պատասխանել լրագրողների հարցերին: Բացառություն էր խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը: Նա եւ՛ Ադրբեջանի նախագահին ռազմական հանցագործ էր անվանում, ասում, որ Ալիեւը վստահելի չէ, եւ՛ որ ամեն ինչ պետք է անել խաղաղության պայմանագիր ստորագրելու համար՝ հանուն երկարատեւ խաղաղության: Արցախի ինքնորոշման համար շանսերը հիմա է՛լ ավելի մեծ էր համարում:

«Այս իրավիճակով է՛լ ավելի մեծ է հնարավորությունը Արցախի ժողովրդի իրավունքների եւ անվտանգության իրացման, եւ ավելի քիչ են ռիսկերը Հայաստանի միջազգայնորեն ճանաչված սուվերեն տարածքների...»:

Հայաստանը պատրաստ է ճանաչել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մաս. մամուլի ասուլիսի ժամանակ այդ մասին հայտարարել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ավելի հստակեցնելով, թե ինչ նկատի ունի Երեւանը, երբ խոսում է Ադրբեջանի 86 հազար 600 քառակուսի մետր տարածքային ամբողջականության մասին:

«Հայաստանի այսօրվա կառավարությունն ինչ ասի-չասի, Հայաստանի Հանրապետության բոլոր կառավարությունները ճանաչել են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Եվ ես ասել եմ եւ ավելի եմ կոնկրետացրել եւ ավելի կոնկրետ դժվար եմ պատկերացնում. կարող եմ ասել՝ 86,6 հազար [քառակուսի] կիլոմետր տարածքային ամբողջականությունը Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է ճանաչել, եւ, մեր ընկալմամբ, Ադրբեջանը պատրաստ է ճանաչել Հայաստանի Հանրապետության 29 հազար 800 քառակուսի կիլոմետր տարածքային ամբողջականությունը», - հրավիրած ասուլիսում նշեց Փաշինյանը:

Միաժամանակ, սակայն, ըստ Փաշինյանի, Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության հարցը պետք է քննարկվի Ստեփանակերտ - Բաքու երկխոսության միջոցով: Թե արդյոք Բաքուն համաձայն է, վարչապետը չմանրամասնեց. «Կարեւոր ենք համարում այդ բանակցությունների միջազգային երաշխիքների ստեղծումը: Նկատի ունենք, օրինակ, որ կարող է Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության հարցը ուղղակի մոռացության մատնվել, եւ Ադրբեջանը շարունակի ուժային լծակի գործադրմամբ Լեռնային Ղարաբաղի հայության էթնիկ զտման եւ ցեղասպանության քաղաքականությունը: Եվ մենք կարեւոր ենք համարում, որ լինեն երաշխիքներ, որ այդ քաղաքականությունը չի շարունակվելու»:

Փաշինյանը նաեւ փակագծեր էր բացել: 1975 թվականի քարտեզները, որոնց հիմքով կողմերը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը, ներառում են նաեւ անկլավները: Դրանք փոխանակելու հարցում, սակայն, միանշանակ դիրքորոշում Երեւանը չունի: Ավելի վաղ Հայաստանի իշխանությունները հայտարարում էին, թե անկլավների փոխանակման իրավական հիմքեր չկան. «29 հազար 800-ի մեջ մտնում է նաեւ Արծվաշենը: 86 հազար 600-ի մեջ էդ հաշվարկներով մտնում են նաեւ անկլավները: Մենք էլի ասում ենք՝ սա քաղաքական որոշում է, բայց հարցի իրավական մասը դեռ պետք է դիտարկել եւ նայել»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանն ընդունել է Սլովակիայի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Պիտեր Գերհարտի գլխավորած պատվիրակությանը եւ քննարկել միջուկային էներգետիկայի ոլորտում համագործակցության հնարավորությունները:

ՏԿԵ նախարարությունից հայտնում են, որ հաշվի առնելով, որ Սլովակիան ունի ատոմակայաններ շահագործելու մեծ փորձ՝ երկուստեք կարեւորվել է միջուկային էներգետիկայի ոլորտում փորձի փոխանակումը, համապատասխան կազմակերպությունների միջեւ համատեղ ծրագրերի իրականացումը:

Սլովակյան ընկերությունները հրավիրվել են մասնակցելու Հայկական ԱԷԿ-ում իրականացվող աշխատանքների մրցույթներին:

ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԿՄԵԿՆԻ ՄՈՍԿՎԱ

ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը մեկնում է Մոսկվա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Արմեն Գրիգորյանը Մոսկվայում կմասնակցի Անվտանգության հարցերը համակարգող բարձր ներկայացուցիչների միջազգային 11-րդ հանդիպմանը:

Արմեն Գրիգորյանի հետ Մոսկվա են մեկնել նաեւ Անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդական Գոռ Երանյանը եւ անվտանգության խորհրդի քարտուղարի օգնական Սեւակ Ղահրամանյանը: Նրանց գործուղումն այսօրվանից մինչեւ մայիսի 25-ը ներառյալ է:

Միեւնույն ժամանակ նշվում է, որ Արմեն Գրիգորյանի եւ Գոռ Երանյանի գործուղման գիշերավարձի հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Մայիսի 22-ին ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն ընդունել է ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի ներկայացուցիչներ գեներալ-մայոր Քիթ Ֆիլիփսին եւ Պատրիկ Պրայորին:

Զրուցակիցները քննարկել են տարածաշրջանային եւ արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակը եւ կարեւորել անվտանգության ոլորտում ՀՀ-ԱՄՆ համագործակցությունը:

ՊԱՏՎԱԿ

ՓԱՍՏԱԲԱՆԸ ՀԱՓՇՏԱԿԵԼ Է 5 ՄԼՆ ԴՐԱՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչությունում իրականացված ֆինչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում պարզվել են փաստաբանների դպատի անդամ, Երեւանի 43-ամյա բնակչուհի Ս.Ս.-ի կողմից քաղաքացուն իրավաբանական օգնություն ցույց տալու պատրվակով վերջինիցս առանձնապես խոշոր չափերի գումարի հափշտակության դեպքի մի շարք հանգամանքներ:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ քաղաքացին ամուսնալուծվելուց հետո անչափահաս դստեր խնամքը ստանձնելու, վերջինիս իր հետ բնակվելու իրավական գործընթացի կապակցությամբ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով Facebook սոցիալական ցանցի միջոցով 2021թ. ապրիլի 6-ին հաղորդագրություն է ուղարկել հանրությանը հայտնի «Վարդան Ղուկասյան» օգտատիրոջը՝ վստահելի փաստաբանի տրամադրման հարցում իրեն օգնելու խնդրանքով: Վարդան Ղուկասյանը հաղորդագրության միջոցով կնոջն ուղղորդել է իր անունից դիմել «Հանրային ձայն» կուսակցության նախագահ Արտակ Գալստյանին՝ փոխանցելով վերջինիս բջջային հեռախոսահամարը: Հիշյալ կինը Արտակ Գալստյանի հեռախոսահամարը փոխանցել է իր ծնողներին, որոնք շուրջ երկու շաբաթ անց՝ վերջինիս հետ հեռախոսազրույց ունենալուց հետո, հանդիպել են նրան: Արտակ Գալստյանը, որպես փաստաբան, կնոջ ծնողներին ներկայացրել է «Ա....» ՍՊԸ հիմնադիր տնօրեն, փաստաբանների պալատի անդամ Ս.Ս.-ին:

Վերջինս մի խումբ այլ անձանց հետ, առանձնապես խոշոր չափերի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, կեղծ խոստումներ են տվել խնդրին շատ արագ լուծում տալու մասին եւ երաշխավորել անչափահաս երեխայի՝ ՌԴ վերադարձը կազմակերպել: Դրա համար նրանք պահանջել են 9.000 ԱՄՆ դոլարին համարժեք 4.700.000 ՀՀ դրամ գումար, որի շուրջ փաստաբանի եւ հիշյալ քաղաքացու հոր միջեւ կնքվել է պայմանագիր: Դրանից հետո Արտակ Գալստյանի ներկայությամբ եւ հորդորով քաղաքացու ծնողների կողմից 43-ամյա կնոջն առձեռն փոխանցվել է 5000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.597.150 ՀՀ դրամ: Գումարը ստանալուց հետո 43-ամյա կինը հիշյալ քաղաքացու մոտ տպավորություն է ստեղծել, թե իբրեւ զբաղվում է նրա դստեր հարցով, դիմել է համապատասխան մարմիններին:

Այնուհետեւ քաղաքացին, 2021թ. սեպտեմբերի 13-ին քննչական մարմնի կողմից հրավիրված լինելով հարցաքննության, փաստաբանին տեղեկացրել է այդ մասին, որը կրկին իրենից պահանջել է 491.880 ՀՀ դրամին համարժեք 1000 ԱՄՆ դոլար, որը կինը նույն օրն առձեռն տվել է նրան:

Հետագայում քաղաքացին համապատասխան հարցումների միջոցով պարզել է, որ դուստրը 2021 թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ-ից դուրս է բերվել դեպի Վրաստանի Հանրապետություն, այնուհետեւ ԱՄԷ Շարժա, որտեղից էլ Դուբայ քաղաք, ինչի մասին տեղեկացրել է փաստաբանին: Վերջինս, WhatsApp հավելվածի միջոցով հաղորդագրություններ է ուղարկել քաղաքացուն եւ խաբեությամբ նրան հայտնել, թե, իբրեւ, կան մարդիկ, որոնք շեյխերի մակարդակով կարող են գտնել երեխային եւ կարգավորել վերջինիս վերադարձի խնդիրը, որի համար պահանջել է եւս 2.000.000 ՀՀ դրամ: Որոշ ժամանակ անց նա տեղեկացրել է, թե պետք է գնան Դուբայ քաղաք, սակայն Դուբայի իրենց գործընկերները նպատակահարմար են գտնում այնտեղ մեկնել տոներից հետո՝ 2023 թվականի հունվարին, իսկ մինչ այդ 2.000.000 ՀՀ դրամը պետք է փոխանցվի իրենց գործընկերներին: Քաղաքացին, գտնվելով անելանելի վիճակում, համաձայնել է առաջարկին եւ 2022թ. դեկտեմբերին՝ տարբեր օրերի, բանկային փոխանցմամբ փաստաբանին մաս-մաս փոխանցել է հիշյալ գումարը:

Փաստաբանը կնոջից պահանջել է նաեւ 2500 ԱՄՆ դոլար՝ Դուբայ մեկնելու տոմսերի, հյուրանոցի եւ վիզայի համար, ինչը վերջինս նույնպես վճարել է:

Դրանից հետո՝2023 թվականի մարտի 10-ին, փաստաբանը քաղաքացու հետ մեկնել է Դուբայ քաղաք, որտեղ շարունակել է վերջինիս վստահեցնել, թե, իբրեւ, ինչ-որ մարդիկ զբաղվում են նրա դստեր հարցերով, որ վերջինս գտնվում է Դուբայ քաղաքում, այնինչ կինը պարզել է, որ դուստրը դեռեւս 2022թ. մայիսին Դուբայ քաղաքից մեկնել է Թուրքիայի Հանրապետություն:

Դրանից հետո՝ մարտի 14-ին, նրանք վերադարձել են Հայաստան՝ այդպես էլ չլուծելով անչափահաս երեխային մորը վերադարձնելու ստանձնած պարտավորությունը: Այդկերպ փաստաբանը խմբի կազմում քաղաքացուց խարդախությամբ հափշտակել է ընդհանուր 5.122.150 ՀՀ դրամ՝ վերջինիս պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս: Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ փաստաբանի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, որը համապատասխանում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին: Վերջինս ձերբակալվել է՝ դատարան ներկայացվելու հիմքով: Միջնորդություն է ներկայացվել դատարան Ս.Ս.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ երեկ՝ մայիսի 22-ին ArmLur.am-ը հայտնել է, որ ձերբակալվել է փաստաբան Սուսաննա Սարգսյանը:Մեզ հասած լուրերի համաձայն՝նրա դեմ հաղորդում է ներկայացրել վստահորդը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԵՆ «ՎԵՆԵՑԻԱ» ՍՐՃԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻՆ

Մայիսի 22-ին դանակահարություն է տեղի ունեցել Լոռու մարզում:

Ժամը 14:50-ի սահմաններում «Վանաձոր» բժշկական կենտրոնից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Բազումի բաժին ահազանգ է ստացվել, որ «աջ կոնքի շրջանի եւ ծնկան շրջանի կտրած-ծակած» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի:

Ինչպես հայտնում է sha2shyan.ձօշ-ը, բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորը ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում է վիրահատարանում:

Նշվում է, որ մինչ բժիշկները անհրաժեշտ բուժօգնությունն են ցուցաբերել վիրավորին, ոստիկանները պարզել են, որ նա Վանաձոր քաղաքի բնակիչ 41-ամյա Արայիկ Սարկիսյանն է:

Պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 14:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Սայաթ-Նովայի անվան զբոսայգում գտնվող հայտնի «Վենեցիա» սրճարանի տնօրեն, հիվանդանոց տեղափոխված Ա. Սարկիսյանը վիճաբանել է Վանաձոր քաղաքի բնակիչներ, եղբայրներ 27-ամյա Դ. Ղամբարյանի եւ 19-ամյա Գ. Ղամբարյանի հետ: Դրանից հետո Ա. Սարկիսյանը տեղափոխվել է հիվանդանոց: Կայքի տեղեկություններով՝ վիճաբանության հիմնական մեղավորը եղել է սրճարանի տնօրենը, որը Վանաձորում հայտնի է նաեւ Վայֆայի Արո մականվամբ: Սրճարանի տարածքում նա ու մի քանի հոգի հայհոյանքներ են հնչեցրել: Ղամբարյանը խնդրել է նրանց, որ դադարեցնեն հայհոյանքներ տալը, քանի որ սրճարանում մարդիկ կան, այդ թվում՝ աղջիկ, սակայն դա նրանց վրդովվեցրել է, ու սկսել են քաշքշել Ղամբարյանին:

Գալով սրճարան՝Գ. Ղամբարյանը տեսել է այդ ամենը եւ փորձել միջամտել վիճաբանությանը, սակայն Ա. Սարկիսյանը շարունակել է հարվածներ հասցնել Ղամբարյան եղբայրներին: Այդ ժամանակ եղբայրներից մեկը դանակով, ըստ նախնական տեղեկությունների, ինքնապաշտպանության նպատակով հարվածներ է հասցրել Ա. Սարկիսյանին: Դեպքի վայրում էլ հայտնաբերվել են արնանման հետքեր, հանցագործության գործիք դանակը:

ԼՈՒՐԵՐ

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ

Երեկ տեղի ունեցավ «Ազատ Արցախ-հայաքվե» օրենսդրական նախաձեռնության ներկայացումը հանրությանը:

«Ազատ Արցախ-հայաքվե» նախաձեռնող խումբը օրենսդրական փոփոխության ստորագրահավաք է սկսել, որով ծանր պատիժ է նախատեսում Արցախն Ադրբեջանի մաս ճանաչող եւ Հայոց ցեղասպանության նշանակությունը նսեմացնող գործողությունների համար: Նախաձեռնության նպատակն է հանրության աջակցությամբ ստանալ 50.000 ստորագրություն, որով հնարավորություն կստանան Արցախը հայկական պահելու հարցը ներմուծել Ազգային ժողովի օրակարգ եւ դնել քվեարկության: Այսպիսով, հանրությանը կոչ է արվում մոտենալ ցանկացած համայնքապետարան կամ քաղաքապետարան եւ ստորագրությամբ համաձայնել «Ազատ Արցախ-հայաքվե»-ին, որով այս փոփոխությունը կարող է մտնել քրեական օրենսգիրք: Ըստ նախաձեռնության անդամների՝ դրանով կարող ենք ստիպել Հայաստանի իշխանություններին ետ կանգնել Արցախը հանձնելուց:

Նախաձեռնության բանախոսներն էին «Համախմբում» շարժման խորհրդի անդամ Ավետիք Չալաբյանը, «Կոնցեռն դիալոգ» փաստաբանական գրասենյակի կառավարիչ գործընկեր Արամ Օրբելյանը, քաղաքագետ, «Հայկական նախագիծ» նախաձեռնության համահիմնադիր Հրանտ Միքայելյանը, ՀԱԵ Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը եւ ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան, մշակութային գործիչ Հրանտ Թոխատյանը: Հարցին, թե արդյոք համայնքապետարաններում անցկացնելով ստորագրահավաք՝ կարող են ապահովել դրա անխոչընդոտ ընթացքը, եւ արդյոք իշխանությունները լծակ չեն ունենա դրա արհեստական դադարեցման համար, բանախոսները նշեցին, որ ստորագրահավաքը վերահսկվելու է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից եւ այսպիսի ստորագրահավաք առաջին անգամ է տեղի ունենալու Հայաստանում:

ՀԱՅԱԴՈՒԼ՝ ԱՐԹԻԿԻ ԲԱՆՏՈՒՄ

ArmLur.am-ին «Արթիկ» ՔԿՀ-ի կալանավորներ Դավիթ Հովսեփյանը եւ Անդրանիկ Սարգսյանը հացադուլ են հայտարարել: Նրանք մեղադրվում են ավազակային հարձակում կատարելու համար այն պարագայում, երբ որեւէ ապացույց առկա չէ: Սույն գործը 2022թ. հունիսից գտնվում է դատարանում. արդեն 3 դատավոր է փոխվել, իսկ դատական նիստերն անընդհատ հետաձգվում են: Մայիսի 18-ին ի վերջո դատական նիստը կայացավ, սակայն դատավոր Սաթենիկ Անդրեասյանը մերժեց այլընտրանքային խափանման միջոցի միջնորդությունը այն պարագայում, երբ դատական նիստերը կայանում են լավագույն դեպքում 6 ամիսը մեկ: Անդրանիկ Սարգսյանը եւ Դավիթ Հովսեփյանը խնամքին ունեն անձինք, Անդրանիկ Սարգսյանը՝ հաշմանդամության կարգ, իսկ Դավիթ Հովսեփյանը կամավոր մասնակցել է 44-օրյա պատերազմին ամենաթեժ հատվածներում: Քանի որ կալանքի տակ պահելու հետքերը առկա չեն, գործով ապացույցներ առկա չեն, իսկ Շիրակի մարզի դատախազ Եդիգարյանը ունի տրամադրվածություն. վերոնշյալ անձինք հայտարարել են հացադուլ եւ պահանջում են, որպեսզի մեղադրող դատախազը փոխվի, եւ իրենց խափանման միջոց կալանքը փոխվի այլընտրանքային խափանման միջոցով խնամքի տակ գտնվող անձանց հոգ տանելու նպատակով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է Վրաստանի քաղաքացի, Զուգդիդի քաղաքի բնակիչ,1985թ. ծնված Ալմա Վլադիմիրի Չխապելիայի դատավարությունը: Բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, ըստ իր հայտարարության՝ խնամքին երկու անչափահաս երեխա ունեցող Ա. Չխապելիան, 2019թ. հունիսին իր ծանոթ Արծրուն Սլյանին տեղեկացնելով իր գումարային խնդիրների մասին, նրան խնդրել է օգնել:

Ա. Սլյանը հայտնել է, որ Դիլիջան քաղաքի Կամարինի փողոցի 1-ին նրբանցքի 8-րդ տանը, հնարավոր է, որ գումար լինի: 2019թ. հուլիսի սկզբին Ա. Սլյանը Ա. Չխապելիային ծանոթացրել է իր ընկեր Վազգեն Մնացականյանի հետ, որը ցանկություն է հայտնել Ալմայի հետ գողություն կատարել: Նշված երեքը, համաձայնության գալով Բագրատ Սանթրոսյանի գույքի գաղտնի հափշտակության շուրջ, 2019թ. հուլիսի 2-ին՝ ժամը 08:00-ից 12:50-ն ընկած ժամանակում, Արծրուն Սլյանի «Նիսսան Տիդա» մակնիշի ավտոմեքենայով ուղեւորվել են Դիլիջան քաղաք, ճանապարհին պատահաբար հանդիպելով Բագատ Սանթրոսյանի ավտոմեքենային՝ համոզվել են, որ վերջինիս տանը մարդ չկա:

Արծրուն Սլյանն իր ավտոմեքենան կայանել է Դիլիջանի «Թուֆենկյան հին Դիլիջան» համալիրի մոտ, որից հետո Ալմա Չխապելիան եւ Վազգեն Մնացականյանը մոտեցել են Բագրատ Սանթրոսյանի տանը, ապօրինի մուտք են գործել տուն եւ գաղտնի հափշտակել ընդհանուր 15 միլիոն 793 հազար դրամի գույք, 7 միլիոն դրամ կանխիկ գումար, 4 միլիոն 293 հազար 9000 դրամի համարժեք 9000 ԱՄՆ դոլար եւ ընդհանուր 4 միլիոն 500 հազար դրամ արժեքի ոսկյա զարդեր, բիժուտերիաներ, խորհրդային մետաղադրամներ եւ թղթադրամներ, որից հետո դիմել են փախուստի: Բացի այդ, Ալմա Չխապելիան Ա. Սլյանի եւ Դիլիջան քաղաքի բնակիչ Ազատ Պողոսյանի հետ նախնական համաձայնությամբ 2019թ. օգոստոսի 22-ին Հաղարծին գյուղում գողություն են կատարել. Ա. Չխապելիան ապօրինի մուտք է գործել Ֆելիքս Ստեփանյանի տուն, գաղտնի հափշտակել 34 800 դրամ արժողությամբ 4 դանակներ, 9000 դրամ արժողությամբ բջջային հեռախոս եւ 1 միլիոն 140 հազար դրամ գումար, որից հետո երեքով դիմել են փախուստի: 2020թ. հուլիսի 29-ի որոշմամբ հարուցված քրեական գործից անջատվել է մեղադրյալներ Արծրուն Սլյանի, Ազատ Պողոսյանի եւ Վազգեն Մնացականյանի վերաբերյալ մասը: 2019թ. հոկտեմբերի 16-ին Ալմա Չխապելիայի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, նա 2022թ. մարտի 25-ին ձերբակալվել է Մինսկի ազգային օդանավակայանի տարածքում: Ա. Չխապելիան մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 254 հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով (2դրվագ) եւ 396 հոդվածի 3-րդ մասի 2-ր կետով: 2023թ. մայիսի 5-ին Բերդ քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Մարդանյանը որոշել է Ալմա Չխապելիայի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը երկարաձգել 3 ամիս ժամկետով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐ

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՔԱՆԱԿԻ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը կանխել է տարածաշրջանում աննախադեպ քանակի Ֆենտանիլ տեսակի թմրամիջոցի մաքսանենգության դեպք:



Օրերս ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնում տեղեկություններ էին ստացվել, որ Երեւանում բնակվող ԱՄՆ-ի քաղաքացու անվամբ, հնարավոր է, Հայաստան ներմուծվի թմրամիջոցի պարունակությամբ առաքանի:

Տեղեկությունների իսկությունը ստուգելու, ինչպես նաեւ հնարավոր մաքսանենգության դեպքը կանխելու եւ բացահայտելու նպատակով ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության բաժնի աշխատակիցների ձեռնարկած անհետաձգելի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է նշված քաղաքացու ինքնությունը, իսկ վերջինիս անվամբ ներմուծվելիք առաքանիներն անմիջապես վերցվել են հսկողության:

Օրեր անց Մաքսանենգության դեմ պայքարի վարչության օպերատիվ հետախուզության եւ «Զվարթնոց» բաժնի աշխատակիցներն ԱՄՆ քաղաքացի Ա.Ք-ի անվամբ ՀՀ ներմուծված առաքանու մաքսային զննման արդյունքում հայտնաբերել են 10,8 գրամ ընդհանուր քաշով հերոին տեսակի թմրամիջոց, որը թաքցված է եղել առաքանու իրերի մեջ: Ձեռնարկված «Վերահսկելի մատակարարում եւ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում հիշյալ առաքանին ստանալիս ԱՄՆ քաղաքացին ձերբակալվել է:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցները չեն սահմանափակվել եւ շարունակել են ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու վերլուծական աշխատանքը ԱՄՆ քաղաքացու հետ փոխկապակցված անձանց պարզելու եւ բացահայտելու նպատակով: Արդյունքում տեսադաշտում է հայտնվել մի նոր քաղաքացի՝ Է.Մ-ն:

Անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում տեղեկություններ են ձեռք բերվել առ այն, որ տվյալ քաղաքացու անվամբ Հայաստան է ներմուծվելու առաքանի, որը, հնարավոր է, պարունակի թմրամիջոցներ:

ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ԱԱԾ աշխատակիցների կողմից մաքսային զննման է ենթարկվել ՀՀ քաղաքացու անվամբ ներմուծված առաքանին, որում առկա քաղցրավենիքի փաթեթի միջից հայտնաբերվել է Ֆենտանիլ տեսակի թմրամիջոցի 80 հաբ:

Դրանք միախառնված եւ թաքցված են եղել նույն ապրանքանիշի քաղցրավենիքի հետ: Համատեղ իրականացված «Վերահսկելի մատակարարում եւ գնում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում հիշյալ առաքանին ստանալիս ՀՀ քաղաքացին ձերբակալվել եւ տեղափոխվել է բնակության վայր իր մասնակցությամբ բնակարանի խուզարկություն իրականացնելու նպատակով:

Վերջինիս բնակության վայրից հայտնաբերվել է նաեւ 2 հատ «Մակարով» տեսակի հրազեն՝ լիցքավորված մարտական փամփուշտներով, բազմաթիվ օգտագործված ներարկիչներ՝ թմրամիջոցների հետքերով: Հայտնաբերվել են նաեւ բազմաթիվ այլ տարաներ՝ կրկին թմրամիջոցների հետքերով:

Բացահայտված Ֆենտանիլ տեսակի թմրամիջոցի օգտագործումը չափազանց վտանգավոր է, քանի որ դրա գերդոզավորումից հանգեցնող մահվան դեպքերի ցուցանիշը, մյուս թմրամիջոցների հետ համեմատած, ամենաբարձրն է:

Համաձայն ԱՄՆ արդարադատության թմրամիջոցների դեմ պայքարի գործակալության (DEA) պաշտոնական հրապարակումների՝ Ֆենտանիլ տեսակի թմրամիջոցի 10 հաբից 6-ը պարունակում է մահացու չափաբաժին, իսկ համաձայն վիճակագրական տվյալների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում 2022 թվականի ընթացքում Ֆենտանիլ տեսակի թմրամիջոցից մահացել է շուրջ 72 հազար քաղաքացի, եւ այս ցուցանիշը տարեցտարի ավելանում է: Ֆենտանիլի ազդեցության էֆեկտը 50 անգամ ավելի ուժեղ է, քան Հերոինի, եւ 100 անգամ ավելի ուժեղ, քան Մորֆինի ազդեցությունը:

ՊԵԿ-ը հորդորում է քաղաքացիներին զերծ մնալ անօրինական ճանապարհով թմրամիջոցների տեղափոխումից եւ օգտագործումից:

ՈՐՈՇՈՒՄ

ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների, Հայաստանի Հանրապետության պաշտոնական անձանց սպասարկման կարգը, ինչպես նաեւ այդ սրահից օգտվող օտարերկրյա պատվիրակությունների եւ Հայաստանի Հանրապետության պաշտոնական անձանց ցանկը սահմանվելու է վարչապետի որոշմամբ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը համապատասխան նախագիծ է ներկայացրել եւ առաջարկում է փոփոխություններ կատարել ««Պաշտոնական անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում: Նշենք, որ օդանավակայաններում հատուկ եւ պաշտոնական պատվիրակությունների սրահները 2 տարբեր սրահներ են: Այժմ սահմանված է, որ Հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի նախագահը, պաշտոնաթող Հանրապետության նախագահը, ինչպես նաեւ նրանց ուղեկցող ընտանիքի անդամները կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության օդանավակայաններում առանձնացված հատուկ սրահից: Առանձին դեպքերում հատուկ սրահից կարող են օգտվել նաեւ այլ անձինք՝ վարչապետի որոշմամբ սահմանված կարգով:

Հիմնավորման մեջ նշվում է՝ հաշվի առնելով, որ օրենքում առկա իրավակարգավորումները վերաբերում են միայն որոշ պաշտոնատար անձանց եւ նրանց ընտանիքի անդամների՝ օդանավակայանների առանձնացված հատուկ սրահից օգտվելուն, որը այլ կերպ կոչվում է նախագահական կամ կառավարական սրահ, անհրաժեշտություն է առաջացել օրենքում նախատեսել դրույթներ նաեւ օդանավակայանների մյուս՝ պաշտոնական պատվիրակությունների սրահից օգտվելու կարգի վերաբերյալ՝ սահմանելով լիազորող նորմ, որի հիման վրա, վարչապետի որոշմամբ սահմանված կարգով՝ հնարավոր կլինի ապահովել Հայաստանի Հանրապետությունում օդանավակայանների պաշտոնական պատվիրակությունների սրահներից պաշտոնատար անձանց, նրանց ընտանիքի անդամների եւ պաշտոնական պատվիրակությունների օգտվելու կարգը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 11-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՑԱՆԿ

ՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով՝ հաստատվել է 2023/2024 ուստարվա բուհերի ընդունելության միասնական քննությունների՝Երեւանի եւ մարզերի քննական կենտրոնների ցանկը:

Քննական կենտրոնները 40-ն են՝ 26-ը՝ մարզերում, 14-ը՝մայրաքաղաքում:

ԵՐԵՎԱՆ

1) Երեւանի թիվ 11 հիմնական դպրոց
2) Երեւանի թիվ 14 հիմնական դպրոց
3) Երեւանի թիվ 29 ավագ դպրոց
4) Երեւանի թիվ 57 հիմնական դպրոց
5) Երեւանի թիվ 62 ավագ դպրոց
6) Երեւանի թիվ 88 հիմնական դպրոց
7) Երեւանի թիվ 118 ավագ դպրոց
8) Երեւանի թիվ 135 հիմնական դպրոց
9) Երեւանի թիվ 155 հիմնական դպրոց
10) Երեւանի թիվ 168 հիմնական դպրոց
11) Երեւանի թիվ 170 ավագ դպրոց
12) Երեւանի թիվ 189 ավագ դպրոց
13) Երեւանի թիվ 190 ավագ դպրոց
14) Երեւանի թիվ 200 հիմնական դպրոց

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

15) Աշտարակի թիվ 3 հիմնական դպրոց
16) Աշտարակի թիվ 5 ավագ դպրոց

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

17) Արտաշատի թիվ 1 հիմնական դպրոց
18) Արտաշատի թիվ 4 հիմնական դպրոց
19) Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոց

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

20) Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց
21) Արմավիրի թիվ 5 հիմնական դպրոց
22) Արմավիրի թիվ 10 հիմնական դպրոց

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

23) Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոց
24) Գավառի թիվ 3 հիմնական դպրոց
25) Գավառի թիվ 5 հիմնական դպրոց

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

26) Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց
27) Վանաձորի թիվ 16 հիմնական դպրոց
28) Վանաձորի թիվ 24 միջնակարգ դպրոց

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

29) Չարենցավանի թիվ 1 ավագ դպրոց
30) Չարենցավանի թիվ 3 հիմնական դպրոց
31) Չարենցավանի թիվ 4 հիմնական դպրոց
32) Չարենցավանի թիվ 5 հիմնական դպրոց

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

33) Գյումրու թիվ 10 հիմնական դպրոց
34) Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց
35) Գյումրու թիվ 21 հիմնական դպրոց

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

36) Գորիսի թիվ 3 հիմնական դպրոց
37) Կապանի թիվ 6 հիմնական դպրոց

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

38) Եղեգնաձորի ավագ դպրոց

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

39) Իջեւանի ավագ դպրոց
40) Իջեւանի թիվ 4 հիմնական դպրոց

Հիշեցնենք նաեւ, որ 2023/2024 ուստարվա բուհերի ընդունելության միասնական քննությունները կմեկնարկեն հունիսի 9-ին եւ կավարտվեն հունիսի 27-ին:

Միասնական քննությունների համար, ըստ առարկաների, սահմանված են հետեւյալ օրերը՝

09.06.2023 թ. - «Քիմիա», «Ռուսաց լեզու»,
13.06.2023 թ. - «Օտար լեզուներ»,
16.06.2023 թ. - «Մաթեմատիկա»,
20.06.2023 թ. - «Հայոց լեզու եւ հայ գրականություն»,
23.06.2023 թ. - «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»,
27.06.2023 թ. - «Հայոց պատմություն», «Ֆիզիկա»:

ՀՍՏԱԿԵՑՈՒՄ

ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է ՏԱՐԿԵՏՄԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային ժողովի նիստում երեկ՝ մայիսի 23-ին, առաջին ընթերցմամբ քննարկվել է ««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ նախագծով առաջարկվում է հանրակրթական, նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների անընդհատ կրթության համար բարելավել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման վարչարարությունը:

Նախարարը հայտնել է, որ մեր երկրում պարտադիր է 12-ամյա հանրակրթությունը, որը կարող է իրականացվել դպրոցներում, կամ 9-րդ դասարանից հետո՝ նաեւ նախնական կամ միջին մասնագիտական հաստատություններում: Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով նախատեսված է, որ մինչեւ 19 տարեկան լրանալն այն սովորողները, որոնք դեռեւս չեն ավարտել իրենց ուսումնառությունը, ավտոմատ կերպով օգտվում են տարկետման իրավունքից: Նրա խոսքով՝ առկա են դեպքեր, երբ որոշ հանգամանքներից ելնելով՝ 19 տարեկան լրանալուց հետո սովորողը դեռեւս չի ավարտել իր ուսումնառությունը: Այս պարագայում եւս նրանք կարողանում են առանց ընդհատման շարունակել իրենց կրթությունը, հետո նոր անցնել պարտադիր զինվորական ծառայության:

«Սակայն գործող օրենքն ունի որոշ անհարթություններ, որոնք առաջ են բերում խնդիրներ: Մասնավորապես, օրենքով սահմանափակված են այն հիմքերը, որոնք կարող են կիրառվել 19 տարեկան լրացած սովորողի՝ անընդհատ կրթության իրավունքի պահպանման տեսանկյունից: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել տարբեր հիմքերով՝ առողջական վիճակը, ընտանեկան պայմանները եւ այլն: Եվ բոլոր այն դեպքերում, երբ տարկետումն ունեցել է այլ հիմք, քան սովորելը, առաջացել են անհարթություններ եւ խնդիրներ: Հետեւաբար առաջարկվող փոփոխությամբ հստակեցվել են օրենքով սահմանված հիմքերից որեւէ մեկի առկայության պարագայում անընդհատ կրթության հնարավորությունը, ինչպես նաեւ ավելի հստակ է դարձել առանց ընդհատման բառերի ավելացմամբ այս իրավունքի պահպանումը»,- ընդգծել է նախարարը:

Ժաննա Անդրեասյանը վստահեցրել է, որ փոփոխությունն էապես կհեշտացնի վարչարարությունը եւ կբարելավի բազմաթիվ մարդկանց՝ սովորելու եւ այդ ընթացքում տարկետումից անխափան կերպով օգտվելու հնարավորությունը:

Ըստ նախարարի՝ քանի որ արդեն ամառային զորակոչի ընթացքում նշյալ կարգավորման կիրառման կարիք կա, առաջարկվել է նախագիծը քննարկել հատուկ ընթացակարգով:

Զեկույցից հետո նախարարը պատասխանել է նաեւ ԱԺ պատգամավորների հարցերին:

Հարակից զեկուցող ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Հակոբ Ասլանյանը նշել է, որ գլխադասային հանձնաժողովը նախագծին տվել է դրական եզրակացություն՝ վստահեցնելով, որ առաջարկվող փոփոխություններով ավելի պաշտպանված կլինի սովորողների կրթության իրավունքը:

ՀԱՅՏԵՐ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

«4090 բարեգործական» հիմնադրամը շարունակում է ընդունել հայտեր 2023-2024 ուստարվա կրթավճարների տրամադրման համար: Կարող են դիմել 2016 կամ 2020թթ. պատերազմների մասնակիցները, որոնք սովորում են ՀՀ որեւէ բուհում կամ միջին մասնագիտական հաստատությունում եւ կամ այս տարի են պատրաստվում դառնալ ուսանող:

Դիմորդները պետք է նախ լրացնեն հայտը մինչեւ մայիսի 31-ը՝ ժամը 23:59 ներառյալ: Հայտը համարվում է լիարժեք, եթե ուղարկվել է մինչեւ վերոհիշյալ ժամկետը, PDF ձեւաչափով եւ մեկ նամակով նշված էլեկտրոնային հասցեին ու պարունակում է պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Հարցերի դեպքում գրել hello@4090foundation.am էլ. հասցեին կամ հիմնադրամի ֆեյսբուքյան էջին: Շահառուների ընտրությունը կատարվում է մրցութային կարգով եւ երկու փուլով՝ փաստաթղթերի դիտարկում եւ հարցազրույցի անցկացում:

«4090 բարեգործական» հիմնադրամը ստեղծվել է արցախյան երրորդ պատերազմից հետո եւ նպատակն է տրամադրել կրթության հնարավորություն 2016 եւ 2020թթ. պատերազմի մասնակից այն քաջերին, որոնք, չնայած տարբեր խոչընդոտների, գնում են իրենց երազանքի հետեւից՝ դառնալով մեր հայրենիքի ապագան կերտողները: Հիմնադրամը չունի քաղաքական, կրոնական կամ արհեստակցական նպատակներ եւ չի հարում որեւէ քաղաքական հոսանքի: Այս պահի դրությամբ հիմնադրամն ունի ՀՀ տարբեր բուհերում սովորող 60 շահառու:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԿԱՆՑԿԱՑՎԻ ԳՐՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ 6-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ մեկնարկում է Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնը: Այն տեղի կունենա մայիսի 25-27-ը Գ. Սունդուկյանի անվան ազգային-ակադեմիական թատրոնում:

Ինչպես ArmLur.am-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, փառատոնին կմասնակցեն շուրջ 40 հրատարակչություն, գրավաճառներ եւ մշակութային կազմակերպություններ, 50-ից ավելի գրողներ, քննադատներ, թարգմանիչներ, ոլորտի այլ մասնագետներ՝ Հայաստանից, Ռուսաստանից, Լեհաստանից, Իտալիայից, Գերմանիայից, Հունաստանից: Երեք օրերի ընթացքում տեղի կունենա 25 միջոցառում՝ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն: Բոլոր միջոցառումների մուտքն ազատ է: Բացմանը ներկա կլինեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արա Խզմալյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը:

«Գրքի երեւանյան միջազգային փառատոնը Հայաստանում գրականության եւ գրահրատարակչության ոլորտի ամենամեծ պետական ծրագիրն է, որն իրականացվում է 2017 թվականից: Փառատոնը տեւում է երեք օր: Դրա բաղադրիչներն են պարտադիր զեղչով գրքի ցուցահանդեստոնավաճառը, չորս անվանակարգում գրական մրցույթը, շնորհանդեսները, պանելային զրույցները, վարպետութան դասերը, հայ եւ արտասահմանյան գրողների հետ բացառիկ հանդիպումները, համերգները եւ այլն»,- ասվում է հաղորդագրության մեջ: Ըստ աղբյուրի՝ Գրքի երեւանյան փառատոնի փակման հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում կլինի նաեւ գրական մրցանակաբաշխություն «Արձակ», «Պոեզիա», «Դրամատուրգիա» եւ «Մանկապատանեկան գրականություն» անվանակարգերում, տեղի կունենա մայիսի 27-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային-ակադեմիական թատրոնի մեծ դահլիճում: Փակմանը ներկա կլինեն եւ ելույթով հանդես կգան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը: Ստորեւ ներկայացվում է Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնի միջոցառումների ծրագիրը.

Մայիսի 25

12:00, Յոկո Տավադայի «Պատվիրակը» գրքի շնորհանդես,

13:00՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» երկհատորյակի շնորհանդես,

14:00՝ «Իմ» մատենաշարի շնորհանդես,

15:00՝ Վաչե Սարգսյանի «Ակեղդամա» եռահատոր վեպի առաջին երկու մասերի շնորհանդես,

16:00՝ Իեն Մըքյուենի «Քավություն» գրքի շնորհանդես,

17:00 Ռոբին Շարմայի «Հրովարտակ՝ ուղղված ամենօրյա հերոսին» գրքի շնորհանդես | Բուկինիստ,

18:00՝ հանդիպում Տատյանա Տոլստայայի հետ,

19:00՝ համերգ՝ «Լավ Էլի»:

Մայիսի 26

12:00՝ «Երազ» մանկական մատենաշարի առաջին երեք գրքերի շնորհանդես,

13:00՝ Պոլսահայ նորագույն գրականությունը. Սուրեն Դանիելյանի դասախոսությունը,

14:00՝ Բանաստեղծությունը՝ բացված. պոետիկ արտահայտման հետմիջօրե. Շեռնոն Սալիվան եւ Յորդոս Կուտուվելաս,

15:00՝ Դոն Միգել Ռուիսի «Չորս համաձայնությունները» գրքի շնորհանդես,

16:00՝ Վահրամ Ալազանի «Տառապանքի ուղիներում» հուշագրության շնորհանդես,

17:00՝ Շառլ Ազնավուրի պոեզիայի երրորդ հատորի շնորհանդես,

18:00՝ Կլաուդիո Պոցցանի եւ Նարեկ Կոսմոս. գրական-երաժշտական բաթլ,

19:30՝ հանդիպում Արմեն Ջախարյանի հետ (Մեծ դահլիճում):

Մայիսի 27

12:00՝ «Միսս Փերերգրինի յուրահատուկ երեխաների տունը» գրքի շնորհանդես | Արեւիկ,

13:00՝ Ոչ կենցաղային շփում: Ի՞նչն է օգնում կենդանի զգալուն. Դմիտրի Գարիչեւ, Ալեքսանդրա Շալաշովա, Տատյանա Սոլովյովա,

14:00՝ Շուշանիկ Ասատրյանի «Ափից ներս» գրքի շնորհանդես,

15:00՝ Մոգականություն եւ ռեալիզմ. Մարիամ Պետրոսյան, Ալեքսանդրա Շալաշովա,

16:00՝ Ժամանակակիցը, ժամանակավորը եւ անժամանակը պոեզիայում. Կարեն Անտաշյան, Հասմիկ Սիմոնյան, Մարինե Պետրոսյան,

17:00՝ Էրիկ Էմանուել Շմիտի «Օսկարը եւ վարդագույն տիկինը» գրքի շնորհանդես, Վերնատուն,

18:00՝ Արամ Պաչյանի «Եթե սա գրող է» գրքի շնորհանդես,

19:00՝ Գրքի երեւանյան փառատոնի փակման արարողություն եւ մրցանակաբաշխություն (Մեծ դահլիճում):

Գրքի երեւանյան միջազգային վեցերորդ փառատոնը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ «Վերսոպոլիս» կազմակերպության աջակցությամբ իրականացնում են «Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ը եւ «Գրքի փառատոն» կրթամշակութային հասարակական կազմակերպությունը՝ «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի գործընկերությամբ: Գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն է:

ՀՈԲԵԼՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ 120-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՓԱՌԱՏՈՆ

Ռուսաստանի Եկատերինբուրգ քաղաքում մայիսի 15-ից անցկացվել է հայ աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյա հոբելյանին նվիրված միջազգային փառատոնը:

Ինչպես ArmLur.am-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից, փառատոնը իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Սվերդլովսկի պետական ակադեմիական ֆիլհարմոնիայի նախաձեռնությամբ, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի, Խաչատրյանի տրիոյի հետ համատեղ: «Արամ Խաչատրյան տրիոյի մասնակցությունը փառատոնին ներառված է ՀՀ կառավարության կողմից հաստատված Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հոբելյանական միջոցառումների շարքում եւ իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պետական ծրագրով: Հինգ օր շարունակ Եկատերինբուրգ քաղաքում հնչել են Արամ Խաչատրյանի սիմֆոնիկ եւ կամերային ստեղծագործությունները՝ ընդգրկելով մեծանուն կոմպոզիտորի ամբողջ ստեղծագործական ուղին՝ սկսած ուսանողական տարիներից մինչեւ նրա վերջին՝ալտի համար գրված սոնատը: Արամ Խաչատրյանի ամենաշատ կատարվող, ինչպես նաեւ քիչ հայտնի ստեղծագործությունները ներկայացրել են Ուրալի ֆիլհարմոնիկ եւ երիտասարդական նվագախմբերը, Խաչատրյան տրիոն, Ռուսաստանի եւ Հայաստանի հայտնի երաժիշտ-կատարողները»,- ասվում է հաղորդագրության մեջ: Ըստ աղբյուրի՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի նախաձեռնությամբ եւ Սվեդլովսկի պետական ակադեմիական ֆիլհարմոնիայի համագործակցությամբ բացվել է նաեւ ցուցահանդես, որտեղ ներկայացվել են եզակի փաստաթղթեր եւ լուսանկարներ: Ցուցադրությունը ուղեկցվել է կոմպոզիտորի մասին պատմող ֆիլմաշարով:

ԼՈՒՐԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է One Run ԿԻՍԱՄԱՐԱԹՈՆԸ

2023 թվականի հունիսի 4-ին Երեւանում կանցկացվի One Run միջազգային կիսամարաթոնը, որին կարող են մասնակցել բոլոր ցանկացողները՝ գրանցվելով armeniamarathon.org կայքում:

Հայաստանն առաջին անգամ է միացել այս նախաձեռնությանը: One Run-ի մեկնարկն ու վերջնարկը նախատեսված է Հանրապետության հրապարակում: Այն կընդգրկի Երեւանի Նալբանդյան, Աբովյան, Տերյան, Իսահակյան եւ մի շարք այլ կենտրոնական փողոցները: Մրցաշարը միաժամանակ կանցկացվի Երեւանում եւ եւս 5 երկրի 84 քաղաքում:

0-12 տարեկան մասնակիցները կհաղթահարեն 1 կմ, 13 տարեկան եւ բարձր մասնակիցները՝5 կմ, 16 տարեկան եւ բարձր մասնակիցները՝ 10 կմ, իսկ 18 տարեկան եւ բարձր մասնակիցները՝ 21,1 կմ վազքատարածությունը: 7 տարեկանից ցածր մասնակիցները կվազեն իրենց ծնողների ուղեկցությամբ:

Մասնակիցները կստանան մեդալներ, շապիկներ, վկայականներ եւ խրախուսական նվերներ:

Միջոցառումն անցկացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, «Արմ Մարաթոն» հիմնադրամի, «Հերոսների մրցավազք» ինքնավար ոչ առեւտրային կազմակերպության աջակցությամբ: Միջոցառման շահառուն եւ բարեգործական գործընկերն է «Շտապի՛ր դեպի բարին» հիմնադրամը:

Նշենք նաեւ, որ One Run կիսամարաթոնը 7 տարի շարունակ անցկացվել է միայն Ռուսաստանում եւ երկու անգամ ընդգրկվել է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես համաժամանակյա մեկնարկով ամենախոշոր կիսամարաթոն:

ՈՃԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Արդեն 18 օր է անցել այն պահից, ինչ 44-ամյա Քորթնի Քարդաշյանը մի շարք ոճավորված կադրեր էր հրապարակել, որոնցում ձեւացնում է, թե ծխում է, եւ որոնք մակագրել էր. «Ցտեսություն, շիկահեր»:

Այժմ նա կրկին թխահեր է: Իր Instagram-ում Քորթնին սպիտակ կոմբինեզոնով լուսանկար է հրապարակել, որում սեւ մազերով է: «brunette4lyfe»,-մակագրել է գրառումը հայուհին, իսկ իր գտնվելու վայրը նշել Նյու Յորքը, որտեղ նա եւ ամուսինը՝ Թրեւիս Բարքերը, շրջագայության են մեկնել Blink-182-ի հետ՝ նշելով իրենց ամուսնության տարեդարձը:

Keeping Up with the Kardashians շոուի աստղը մարտ ամսից շիկահեր էր:

2017 թվականին՝ People-ին տված հարցազրույցի ժամանակ, Poosh-ի հիմնադիրը խոսել էր իր մազերը ներկելու մասին եւ համոզված նշել, որ այլեւս երբեք շիկահեր չի դառնալու:

● *Մայիսի 25-ին Seven Visions Hotels, The Dvin-ում տեղի կունենա DVINZZ. APRICOT JAM համեգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Նախորդ վարկային պայմանագրով սահմանված վճարումները կատարել եմ ուշացումներով: Արդյունքում ձեւավորվել է վատ վարկային պատմություն, որի պատճառով բանկերը հրաժարվում են ինձ հետ նոր վարկային պայմանագիր կնքել: Ուզում եմ իմանալ՝ արդյոք մեզ չեն կարող նոր հնարավորություն տալ:

Կարեն Պետրոսյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Պետրոսյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետեւաբար վարկատուն (բանկը կամ այլ վարկային կազմակերպություն) ինքն է ազատորեն որոշում՝ ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Այսինքն՝ վարկատուն, գնահատելով Ձեր վարկունակությունը՝ վարկը մարելու հնարավորությունը, ինքն է որոշում՝ Ձեզ հետ կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Ձեր վարկային պատմությունը բարելավելու համար պետք է ամբողջովին մարեք նախկինում գոյացած ժամկետանց վարկային պարտավորությունները, իսկ ներկա պահին գործող վարկերի մասով անհրաժեշտ է բացառել ժամկետանց՝նույնիսկ մեկ օրվա կտրվածքով պարտավորությունների գոյացումը:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տեղեկացնում ենք, որ վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» վարկառուի վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է վերջինիս կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ: Գործնականում «վատ վարկային պատմությունը մաքրել» նշանակում է ընթացիկ վարկային զեկույցներում չունենալ խնդրահարույց վարկեր:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ կարելի է արդյոք արտոնագիր վերցնել կոնկրետ օրերի համար:

Գայանե Ասրյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հավելվածի 12-րդ կետի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց կողմից բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված, Երեւան քաղաքում եւ մարզկենտրոններում՝ 300 մ2 եւ ավելի, այլ քաղաքներում եւ այլ վայրերում՝ 200 մ2 եւ ավելի, սահմանամերձ գյուղերում 100 մ2 եւ ավելի մակերես ունեցող սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու դեպքերում կարող է տրամադրվել արտոնագիր որեւէ ամսվա օրվա կամ օրերի համար:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ընթացիկ տարում արտոնագրային վճար վճարող հանդիսանալուց դադարելու, գործունեությունը դադարեցնելու կամ ժամանակավոր կասեցնելու դեպքերում հավելված 8-ով սահմանված կարգով վճարված արտոնագրային վճարները չեն հաշվանցվում եւ չեն վերադարձվում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեք օր շարունակ պատերազմում զոհված զինծառայողների ծնողները նստացույց են անում կառավարության շենքի դիմաց: Նրանց պահանջն է ազատ արձակել 44-օրյա պատերազմում զոհված Ժորա Մարտիրոսյանի մորը՝ Գայանե Հակոբյանին, որը մեղադրվում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդու՝ Աշոտ Փաշինյանի առեւանգման գործով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 10 +18 + 23
Կոտայքի լեռներ	+ 6 + 10 +18 + 22
Կոտայքի նախալեռներ	+12 + 14 +23 + 23
Գեղարքունիք	+ 6 + 10 +18 + 21
Լոռի	+ 8 + 12 +24 + 27
Տավուշ	+10+ 14 +26 + 30
Արագածոտնի լեռներ	+ 6 + 8 +16 + 19
Արագածոտնի նախալեռներ	+13 + 15 + 22 + 26

Արարատ	+15 + 17 +28 + 30
Արմավիր	+12+ 15 +27 +29
Վայոց ձորի լեռներ	+ 5 + 8 +19 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 8 +28 + 30
Սյունիքի հովիտներ	+14 + 17 +28 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 7 + 10 +21 + 25
Արցախ	+16 + 20 +28 + 33
Երեւան	+ 13+ 15 +26 + 28

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*